ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԷՆԵՐԳԵՏԻԿ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻԵՎԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«10» մարտի 2019թվականի№ 101-Ա

«ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննարկված «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ նկատմամբ 2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 45-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները՝

Պարզվեց, որ «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ին 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 0/29.4/2602-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 637.8 հազար (վեց հարյուր երեսուն յոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով և պետական տուրքի մասով 7 673.2 հազար (յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել են 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-422 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետով և 5-րդ կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

«ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ն զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հունիսի 1-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ Նախարարության կողմից չի ստացվել:

Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, 35-րդ հոդվածով՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական

պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 23-ի թիվ 45-Ա հրամանով «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Նախարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ 07ԱԿ/13.1ՀովԲ/1083-19 գրությամբ իրազեկել է «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ին վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ ու հիմք ընդունելով Օրենքի 47-րդ հոդվածի «ա» կետը՝ սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է:

2019 թվականի մարտի 26-ին կայացած վարույթի շրջանակներում «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ն ներկայացրեց 2019 թվականի մարտի 29-ի թիվ 77 վճարման հանձնարարագիրը, ըստ որի կատարվել է 637,800.00 (վեց հարյուրերեսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով դրամագլխի և շրջակա միջավայրի վճար, ինչպես նաև ներկայացրել են 5-ՕՀՊ հաշվետվությունները՝ 2017- 2018 թթ. միասին, սակայն «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ չի ներկայացրել պետական տուրքի մասով 7 678.2 հազար (յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի գումար վճարված լինելու փաստը հավաստող որևէ ապացույց: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2017 թվականի թիվ ԵԿԴ/0537/04/16 վճռով «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ ճանաչվել է սնանկ և նույն դատարանի 01.03.2017 թվականի թիվ ԵԿԴ/0537/04/16 որոշմամբ նշանակվել սնանկության գործով կառավարիչ:

2019 թվականի ապրիլի 5-ին կայացած վարչական վարույթի ընթացքում «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Հանձնաժողովին հայտնելով, որ դատարանը թույլատրել է աշխատել պարտավորությունները մարելու և նոր կրեդիտորական պարտքեր չկուտակելու պայմանով և բացի այդ դիմել են հարկային մարմնին պետական տուրքի 7 678.2 հազար (յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով գումարի վճարումը տարաժամկետելու նպատակով, վկայակոչելով Օրենքի 47-րդ հոդվածի «գ» կետը, խնդրել է Հանձնաժողովին փոխօգնության կարգով դիմել ՀՀ Պետական եկամուտների կոմիտե:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ի միջնորդությունը, Հանձնաժողովը վերոնշյալ հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով որոշեց վարչական վարույթը երկարաձգել և հաջորդ լսումներն իրականացնել 2019 թվականի մայիսի 6-ին: Նախարարությունը 2019 թվականի ապրիլի 8-ի թիվ 01ԳԲ/13.1ՀովԲ/2189-19 գրությամբ դիմել է Պետական եկամուտների կոմիտե՝ պետական տուրքի պարտավորության տարաժամկետ վճարման թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով:

2019 թվականի մայիսի 5-ին Նախարարությունը ստացել է Պետական եկամուտների կոմիտեի թիվ 05/4822-19 գրությունը, ըստ որի՝ «ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ներկա պահին օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ որևէ արտոնություն սահմանված չէ, հետևաբար բացակայում են «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ին պետական տուրքի պարտավորության տարաժամկետ վճարման թույլտվություն տրամադրելու իրավական հիմքերը»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՀԱԶՐԱՎԱՐԴ» ԱԿ-ի Նորքի բազալտի հանքավայրի «Արմինե» տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2013 թվականի փետրվարի 25-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/422 (նախկին 14/161) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼԿ-422 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-422 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում.

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5/10/2019

X

VERIFIED OCSP 5/10/2019 16:10:06 GMT+4

ԿԱՏԱՐՈՂ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ